ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

07.04.2023 թվականին կնքված N ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/22-6 գնման պայմանագրի

ք. Երևան «12» 05 2023թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի Մետրոպոլիտեն» ՓԲԸ-ը ի դեմս գլխավոր տնօրենի ժ/պ՝ Բ. Սեդրակյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, «ՍԻԳՄԱ 14» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Մեհրաբյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 07.04.2023թ. կնքված N ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/22-6 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը և հաշվի առնելով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման պահանջը և նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված ապրանքների ձեռքբերման համար հատկացված 315000 (երեք հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ, շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.

1. Պայմանագրի Հավելված N 2-ով Մատուցման ժամանակացույցով 19-րդ, 20-րդ չափաբաժինների մասով ներկայացված տողերը խմբագրել և հաստատել նոր շարադասությամբ՝ ըստ սույն համաձայնագրի Հավելված 1-ի:
2. Պայմանագրի Հավելված N 3-ով Վճարման ժամանակացույցով 19-րդ, 20-րդ չափաբաժինների մասով ներկայացված տողերը խմբագրել և հաստատել նոր շարադասությամբ՝ ըստ սույն համաձայնագրի Հավելված 2-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 և թիվ 2 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ | «ՍԻԳՄԱ 14» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78 | ք.Երևան Դավիթ Անհաղթ 6,700 |
| «Ամերիաբանկ» ՓԲԸ | Հայէկոնոմբանկ ԲԲԸ |
| Հ/Հ 1570083324940100 | Հ/Հ 163218054472 |
| ՀՎՀՀ 00000911 | ՀՎՀՀ 01046178 |
| գլխավոր տնօրենի ժ/պ ______ Բ. Սեդրակյան /ստորագրություն/ Կ.Տ. | տնօրեն ______ Ն. Մեհրաբյան /ստորագրություն/ Կ.Տ. |

*Հավելված N 1*
*«07» ապրիլի 2023թ. կնքված*
*ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/22-6 ծածկագրով պայմանագրի*
*«12» 05 2023թ. կնքված*
*թիվ 1 համաձայնագրի*

# ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<table>
<tr><th colspan="8">Ապրանքի</th></tr>
<tr><th rowspan="2">Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը</th><th rowspan="2">Չափման միավորը</th><th rowspan="2">Միավորի գինը (ՀՀ դրամ)</th><th rowspan="2">Ընդհանուր գինը (ՀՀ դրամ)</th><th rowspan="2">Ընդհանուր քանակը</th><th colspan="3">Մատակարարման</th></tr>
<tr><th>Հասցեն</th><th>Ենթակա քանակը</th><th>Ժամկետը</th></tr>
<tr><td rowspan="2">19</td><td rowspan="2">հատ</td><td rowspan="2">210000</td><td rowspan="2">420000</td><td rowspan="2">2</td><td rowspan="2">ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78</td><td>1</td><td>ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև համաձայնագիրը կնքելու օրվանից սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում:</td></tr>
<tr><td>1</td><td>Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում:</td></tr>
<tr><td rowspan="2">20</td><td rowspan="2">հատ</td><td rowspan="2">105000</td><td rowspan="2">840000</td><td rowspan="2">8</td><td rowspan="2">ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78</td><td>7</td><td>ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև համաձայնագիրը կնքելու օրվանից սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում:</td></tr>
<tr><td>1</td><td>Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում:</td></tr>
</table>

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570083324940100
ՀՎՀՀ 00000911

գլխավոր տնօրենի ժ/պ ____________ Բ. Սեդրակյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ՍԻԳՄԱ 14» ՍՊԸ
ք.Երևան Դավիթ Անհաղթ 6,700
Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163218054472
ՀՎՀՀ 01046178

տնօրեն ____________ Ն. Մեհրաբյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
«07» ապրիլի 2023թ. կնքված
ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/22-6 ծածկագրով պայմանագրի
«12» 05 2023թ. կնքված
թիվ 1 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 19 | 32421700/502 | NAS սերվեր | - | - | - | 210000 | 210000 | 210000 | 210000 | 210000 | 210000 | 210000 | 210000 | 210000 | 210000 |
| 20 | 30232231/509 | Կոշտ սկավառակ | - | - | - | 105000 | 105000 | 105000 | 105000 | 105000 | 105000 | 105000 | 105000 | 105000 | 105000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:
**Սույն ժամանակացույցը կլրացվի և կկնքվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570083324940100
ՀՎՀՀ 00000911

գլխավոր տնօրենի ժ/պ________ Բ. Սեդրակյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ՍԻԳՄԱ 14» ՍՊԸ
ք.Երևան Դավիթ Անհաղթ 6,700
Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163218054472
ՀՎՀՀ 01046178

տնօրեն________ Ն. Մեհրաբյան
/ստորագրություն/
Կ.Տ.